



Համարը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/3(11)
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 15.05.1992

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Տաշքենդ
Ընդունման ամսաթիվը 15.05.1992
Ստորագրման ամսաթիվը 15.05.1992
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՀՄԱՆԱՊԱՀ ՋՈՐՔԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՄԱՀՄԱՆԱՊԱՀ ՋՈՐՔԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Մահմանապահ զորքերի զինծառայողների կենսաթոշակային ապահովման և Մահմանապահ զորքերի զինծառայողների պետական ապահովագրման կարգի մասին

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ Համագործակցության մասնակից պետություններ, հիմնվելով 1992 թվականի փետրվարի 14-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջև զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական երաշխիքների մասին և 1992 թվականի մարտի 13-ի՝ Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին Համաձայնագրերի վրա, ցանկություն արտահայտելով համագործակցելու զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների սոցիալական ապահովության բնագավառում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հ ո ղ վ ա ծ 1

Անկախ Պետությունների Համագործակցության Մահմանապահ զորքերի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովությունը ու պարտադիր պետական ապահովագրությունը իրականացվում է այն պայմաններով, նորմերով և կարգով, որոնք սահմանվում են Համագործակցության մասնակից պետությունների օրենսդրությամբ, որոնց տարածքներում բնակվում են նշված զինծառայողները և նրանց ընտանիքները: Նախքան տվյալ հարցերով այդ պետությունների կողմից օրենսդրական ակտերի ընդունումը, գործում է նախկին ԽՍՀՄ օրենսդրությունը:

Հ ո ղ վ ա ծ 2

Համագործակցության Մահմանապահ զորքերի և պետությունների սեփական Մահմանապահ զորքերի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովությունը իրականացվում է Մահմանապահ զորքերի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության գոյություն ունեցող համակարգի միջոցով: Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և զինծառայողների պարտադիր պետական ապահովագրության վրա կատարվող ծախսերը իրականացվում են մասնակից պետությունների կողմից իրենց բյուջեների հաշվին՝ առանց փոխադարձ հաշվարկների: Սույն Համաձայնագրով նախատեսված կենսաթոշակային ապահովության պայմանները, նորմերը և կարգը

տարածվում են նախկին ԽՄՀՄ սահմանապահ զորքերի զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների վրա:

Հ ո ղ վ ա ծ 3

Սահմանապահ զորքերի զինձառայողների կենսաթոշակների նշանակման տարիների վաստակին հաշվառվում է Ջինված ուժերում և այլ զինված կազմավորումներում ծառայությունը (այդ թվում՝ արտոնյալ պայմաններով) Համագործակցության այն մասնակից պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, որոնց տարածքում զինձառայողները անցել են ծառայությունը:

Սահմանապահ զորքերի զինձառայողներին և նրանց ընտանիքների անդամներին կենսաթոշակների նշանակման համար դրամական դրույքաչափերը սահմանվում են Համագործակցության այն մասնակից պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, որոնց տարածքներում բնակվում են զինձառայողները և նրանց ընտանիքների անդամները:

Հ ո ղ վ ա ծ 4

Համագործակցության մասնակից պետությունները փոխանակում են տեղեկություն իրենց պետությունում գործող օրենսդրության, Սահմանապահ զորքերի զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների թոշակային ապահովության և զինձառայողների պետական պարտադիր ապահովագրության մասին, ինչպես նաև տեղեկության փոխանակում են իրականացնում կենսաթոշակային ապահովության և պետական պարտադիր ապահովագրության հարցերի ժամանակին և ճիշտ լուծման համար:

Հ ո ղ վ ա ծ 5

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կատարված է Տաշքենդ քաղաքում 1992 թվականի մայիսի 15-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվներում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կողարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

****Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մայիսի 15-ից:***